ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 69-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 65-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2024 թվականի հուլիսի 30-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին.

2)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N137-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին.

4)Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2025 թվականի ծրագրային հայտեր ներկայացնելուն համաձայնություն տալու մասին.

5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2025 թվականի բնապահպանական ծրագիրը հաստատելու մասին.

6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին.

7)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի հողային հաշվեկշռին և ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը համաձայնություն տալու մասին.

8)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով մրցութային կարգով տրամադրելու մասին.

9)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու մասին.

10)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N128-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

11)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու համար Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն դիմելու մասին:

Կողմ - 5

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

Դեմ - 3

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ

Ձեռնպահ - 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 70-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների և ծախսերի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի կողմից տրված հաղորդումը՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հավելվածների:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 2

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 71-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 137-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Մեղրի համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N137-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 6 Դեմ - 0 Ձեռնպահ - 2

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 72-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025-2027 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 27.1-րդ հոդվածով և հիմք ընդունելով Մեղրի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն 1-6 հավելվածների:

Կողմ -6 Դեմ - 0 Ձեռնպահ - 2

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 73-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանարպետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տարամադրման կարգը հաստատելու մասին» N1708-Ն որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն և պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ ստանալու նպատակով 2025 թվականի համար ներկայացնել հետևյալ ծրագրերը.

1)Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Չարենցի փողոցի 2, 6, 7, 9, 10, 11, 12, 13, 20, 21, 22, 23, 25, 26, 27, 40, Սայաթ-Նովա փողոցի 2, 3, 5, 6, 7, 8 շենքերի և Մեղրի քաղաքի Զ. Անդրանիկ փողոցի 26, 32, 34, 36, 36ա, Ադելյան փողոցի 7, 11, Փարամազի փողոցի 8, 14, Գործարանային փողոցի 49, Կառուցողների փողոցի 2, Արաքսաշեն թաղամասի 1, 2, 3, 4, շենքերի տանիքների նորոգում.

2)Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Թումանյան, Իսահակյան, Կոմիտաս, Շինարարներ, Տերյան, Ալավերդյան և Լեռնագործներ փողոցների ճանապարհային ենթակառուցվածքների նորոգում:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 74-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ կետով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Մեղրի համայնքի շրջակա միջավայրի և բնակչության առողջության պահպանման 2025 թվականի ծրագիրը՝ համաձայն N1 և N2 հավելվածների:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հաստատված ծրագիրը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարան՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնելու և պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր պետական մարմնի միջոցով 2025 թվականի պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ԶԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 75-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Մեղրի համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 07-ի N 553-Ա և հուլիսի 16-ի N618-Ա որոշումները՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն համարվող գույքի 2024 թվականի գույքագրման փաստաթղթերում լրացումներ կատարելու մասին» N11-Ա որոշմամբ հաստատված հավելվածում (համայնքապետարանի հիմնական միջոցներում) կատարել լրացումներ՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -7 Դեմ - 0 Ձեռնպահ - 1

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՁԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 76-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ԵՎ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԾԱԾԿՈՒՅԹԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 11-ի N431-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի կողմից կազմված Հայսատանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի հողային հաշվեկշռին և համայնքի ցամաքային տարածքի ծածկույթի դասակարգմանը՝ համաձայն N1, N2 հավելվածների:

2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 77-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 46-րդ հոդվածով, 48-րդ հոդվածով 4-րդ մասով և 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ և հիմք ընդունելով Մեղրի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 09-005-0734-0023 կադաստրային ծածկագրից առանձնացված գյուղատնտեսական նշանակության 0,15532 հա մակերեսով այլ հողատեսքը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով, 25 (քսանհինգ) տարի ժամանակահատվածով, մրցութային կարգով տրամադրել՝ մեկնարկային վարձավճարի տարեկան գին սահմանելով 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 09-005-0706-0029 կադաստրային ծածկագրից առանձնացված գյուղատնտեսական նշանակության 0,16689 հա մակերեսով այլ հողատեսքը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով, 25 (քսանհինգ) տարի ժամանակահատվածով, մրցութային կարգով տրամադրել՝ մեկնարկային վարձավճարի տարեկան գին սահմանելով 5500 (հինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 09-037-0111-0024 և 09-037-0111-0058 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական

նշանակության 0,26071 հա մակերեսով խաղող և այլ հողատեսքերը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով, 25 (քսանհինգ) տարի ժամանակահատվածով, մրցութային կարգով տրամադրել՝ մեկնարկային վարձավճարի տարեկան գին սահմանելով 7500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 09-092-0317-0022 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության 0,10219 հա մակերեսով այլ հողատեսքը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով, 25 (քսանհինգ) տարի ժամանակահատվածով, մրցութային կարգով տրամադրել՝ մեկնարկային վարձավճարի տարեկան գին սահմանելով 2000 (երկու հազար) ՀՀ դրամ:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 09-002-0064-0118 կադաստրային ծածկագրով 0,0433 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության «պահեստարանների հողեր» գործառնական նշանակության հողամասը՝ պահեստավորման կետ օգտագործելու նպատակով, կառուցապատման իրավունքով, 10 (տասը) տարի ժամանակահատվածով, մրցութային կարգով տրամադրել՝ մեկնարկային վարձավճարի տարեկան գին սահմանելով 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 09-037-0132-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված գյուղատնտեսական նշանակության 0,15631 հա մակերեսով այլ հողատեսքը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով, 25 (քսանհինգ) տարի ժամանակահատվածով, մրցութային կարգով տրամադրել՝ մեկնարկային վարձավճարի տարեկան գին սահմանելով 4500 (չորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 09-037-0111-0059 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության 0,6 հա մակերեսով արոտավայր հողատեսքը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով, վարձակալության իրավունքով, 25 (քսանհինգ) տարի ժամանակահատվածով, մրցութային կարգով տրամադրել՝ մեկնարկային վարձավճարի տարեկան գին սահմանելով 18 000 (տասնութ հազար) ՀՀ դրամ:

8. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ - 5

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

Դեմ - 3

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ

Ձեռնպահ - 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 78-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 80-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ և 67-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման դրույթներով և հիմք ընդունելով Մեղրի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Զ.Անդրանիկի փողոց 5-րդ փակուղի 1/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.037 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0072-0020) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 481 000 (չորս հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.20253 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության «հնդավոր» հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0507-0025) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 410 000 (չորս հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Փարամազի փողոց 17/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.00233 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0072-0020) հողամասը աճուրդային կարգով

օտարել՝ մառան կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 46 000 (քառասունվեց հազար) ՀՀ դրամ:

4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.23762 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0751-0037) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 475 000 (չորս հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:

5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.06937 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության «վարելահող» հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0750-0022) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 140 000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.55999 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության «բազմամյա տնկարկներ» և այլ հողատեսքը (կադաստրային ծածկագրեր՝ 09-037-0127-0001-ից, 09-037-0127-0037 և 09-037-0127-0038) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 840 000 (ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.08243 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0734-0006) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 1 075 000 (մեկ միլիոն յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:

8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.28282 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0153-0008-ից) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 570 000 (հինգ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.18783 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0068-0001-ից, 09-002-0068-0003-ից, 09-002-0068-0004-ից և 09-002-0068-0005-ից) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ ավտոկայանատեղի կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 2 442 000 (երկու միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ:

10. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.25948 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0062-0024-ից, 09-002-0062-0026-ից, և 09-002-0062-0027-ից) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 3 374 000 (երեք միլիոն երեք հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամ:

11. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.16631 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության «հնդավոր» հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-037-0106-0020) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.30997 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0730-0001-ից) աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 620 000 (վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.65103 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության «վարելահող» և այլ հողատեսքը (կադաստրային ծածկագրեր՝ 09-037-0101-0001-ից և 09-037-0101-0055-ից) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 977 000 (ինը հարյուր յոթանասունյոթ հազար) ՀՀ դրամ:

14. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.03799 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0064-0060-ից) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ մառան կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 494 000 (չորս հարյուր իննսունչորս հազար) ՀՀ դրամ:

15. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.06458 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության «վարելահող» հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0734-0015) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 130 000 (մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

16. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վահրավար բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.07062 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության <<խաղող>> հողատեսքը (կադաստրային ծածկագրեր՝ 09-088-0122-0014 և 09-088-0122-0015)

գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 130 000 (մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

17. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.06723 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0067-0062) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 1 278 000 (մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունութ հազար) ՀՀ դրամ:

18. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.08451 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-002-045-0008-ից) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 1 100 000 (մեկ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:

19. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.20055 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության «վարելահող» հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0734-0036-ից) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 405 000 (չորս հարյուր հինգ հազար) ՀՀ դրամ:

20. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.03347 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0071-0001-ից) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 436 000 (չորս հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամ:

21. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.05 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0073-0033-ից) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 650 000 (վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

22. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.1094 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0719-0001-ից) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 1 423 000 (մեկ միլիոն չորս հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ:

23. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 2.36075 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-092-0426-0005-ից) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 2 360 000 (երկու միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

24. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նռնաձոր բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.11844 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-066-0007-0002-ից) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 120 000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

25. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.08828 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0066-0001 և 09-002-0066-0002) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ բնակելի տուն կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 1 148 000 (մեկ միլիոն հարյուր քառասունութ հազար) ՀՀ դրամ:

26. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.2496 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության «վարելահող» հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0750-0016-ից) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

27. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.05377 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության «բազմամյա տնկարկներ» հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0725-0028) գյուղատնտնեսական գործունեություն իրականացնելու նպատակով, աճուրդային կարգով օտարել՝ մեկնարկային գին սահմանելով 110 000 (մեկ հարյուր տասը հազար) ՀՀ դրամ:

28. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Այգեստան թաղամաս 9/8 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.28715 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0057-0051) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ հյուրանոց նպատակով, մեկնարկային գին սահմանելով 3 733 000 (երեք միլիոն յոթ հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ:

29. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի Այգեստան թաղամաս 9/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1.83897 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «այլ հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-002-0057-0049) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ հյուրանոց նպատակով, մեկնարկային գին սահմանելով 24 000 000 (քսանչորս միլիոն) ՀՀ դրամ:

30. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի 2-րդ բնակելի թաղամաս 11/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.02291 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0012-0002) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ մառան կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

31. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի 2-րդ բնակելի թաղամաս 11/3 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.0588 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0012-0004) հողամասը աճուրդային կարգով օտարել՝ մառան կառուցելու նպատակով, մեկնարկային գին սահմանելով 765 000 (յոթ հարյուր վաթսունհինգ հազար) ՀՀ դրամ:

32. Սույն որոշմամբ սահմանված հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) օտարման պայմանագրում ամրագրել Մեղրի համայնքի՝ նշված հողամասերի առաջնային հետգնման իրավունքը և ծրագրի իրականացման ժամկետ սահմանել 10 /տասը/ տարի:

33. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ - 5 Դեմ - 3 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 79-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N128-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով, Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝ համաձայն N1 հավելվածի:

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի:

3.Առաջարկել Մեղրի համայնքի ղեկավարին՝համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու նպատակով սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

4. Սույն որոշման 1-ին և 2-րդ կետերն ուժի մեջ են մտնում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի կողմից համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

5.Ուժը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 10-ի « Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների

թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N93 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին-» N89-Ա որոշման 1-ին կետը:

6.Սույն որոշումը ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի « Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Մեղրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի N 134-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 128-Ա որոշումը:

Կողմ -6	Դեմ -1	Ձեռնպահ -1
ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ ՋԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ	ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ	ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2024 թվականի N 80-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է

1.Դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2016 թվականի նոյեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N153-Ա հրամանով հաստատված անվանացանկում հետևյալ փոփոխությունները կատարելու համար՝

1)Ուժը կորցրած ճանաչել անվանացանկի հետևյալ կետը՝

ա. համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբի 4-րդ կետը՝ «Ներքին աուդիտի բաժնի պետ» (ծածկագիր՝ 2.1-4)

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ - 8 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԱՐՏՈՒՐ
ՋԱՔԱՐՅԱՆ ԲԱԳՐԱՏ
ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ
ՄԻՆԱՍՅԱՆ ՇԱՀԵՆ
ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ ՆԱՐԵԿ
ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՐԵՎԻԿ
ՎԱՆԵՍՅԱՆ ԱՆԺԵԼԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Խ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

2024 թվականի հուլիսի 30
ք.Մեղրի